«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0069,
Դավիթ Անհաղթի 8/4
Հեռ.՝ +374 (11) 400 400
Ֆաքս՝ +374 (11) 400 401
Էլ. փոստ՝ info@ucom.am
www.ucom.am

# Ucom ընկերության համակարգչային գույքի գնման մրցույթ

## Մրցույթի հրավեր (ՄՀ)

Երևան 2024

«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0069,
Դավիթ Անհաղթի 8/4
Հեռ.` +374 (11) 400 400
Ֆաքս` +374 (11) 400 401
Էլ. փոստ` info@ucom.am
www.ucom.am

# Ucom ընկերության համակարգչային գույքի գնման մրցույթ

**1. Մրցույթի առարկան**

«Յուքոմ» ՓԲԸ-ն (այսուհետ` Պատվիրատու) հրավիրում է Ձեր ընկերությանը (այսուհետ` Մասնակից) մասնակցելու Պատվիրատուի կողմից անցկացվող համակարգչային գույքի գնման մրցույթին` բաղկացած ստորև նշված **3 Լոտերից**:

**Լոտ 1.** Համակարգիչի մոնիտոր (PC monitor)

**Լոտ 2.** Նոութբուք համակարգիչ (Notebook)

**Լոտ 3.** Ստացիոնար համակարգիչ (PC workstation)

**2. Մրցույթի պահանջներ**

2.1 Գնային առաջարկները պետք է համապատասխանեն վերոնշյալ ցանկացած Լոտ-ի ապրանքատեսակներին, տեխնիկական նկարագրերին և դրանցում սահմանված յուրաքանչյուր ապրանքի գնման քանակներին: Մասնակիցները կարող են ներկայացնել իրենց գնային առաջարկները անհատական մեկ Լոտ-ի կամ մի քանի Լոտ-երի համակցմամբ:

2.2 Մրցույթի այն մասնակիցները, որոնք կցանկանան առաջարկել գների իջեցում /զեղչեր/ մեկից ավելի Լոտ-երի շնորհման դեպքում, պետք է այդ մասով ինֆորմացիան նշեն գնային առաջարկում:

2.3 Տեղեկացնում ենք, որ ներկայացված գները որոնք տրամադրվել են Պատվիրատուի դիտարկման և ընտրման համար, չեն կարող փոփոխվել, եթե անգամ գնման համար Պատվիրատուի կողմից հավանություն տրվի Մասնակցի կողմից ներկայացված մի քանի Լոտ-ից միայն 1 Լոտ-ին:

2.4 Տեղեկացնում ենք, որ պոտենցիալ մասնակիցները պետք է ծանոթանան Մրցույթի Հրավերին, որից հետո նախապատրաստված գնային առաջարկները ուղարկեն Պատվիրատուի կողմից նշված ստորև էլ. փոստի հասցեներին, սահմանված ժամկետում:

2.5 Պատվիրատուի և Մասնակիցների հաղորդակցությունը իրականացվում է ՄՀ-ի նշված կոնտակտային անձանց հետ` էլեկտրոնային նամակագրության միջոցով.

- Արմեն Միքայելյան *(Գնումների մասնագետ);* Էլ. փոստ` To: Armen.Mikayelyan@ucom.am
  Հմայակ Եզեկյան *(Գնումների վարչության ղեկավար);* Էլ. փոստ` Cc: Hmayak.Yezekyan@ucom.am
- Յուքոմ գլխամասային գրասենյակի հասցե` ք. Երևան, Դավիթ Անհաղթ 8/4

2.6 Գնային առաջարկը պետք է լինի PDF ֆորմատի փաստաթղթով` կնիքված մասնակից ընկերության կնիքով:

2.7 Գնային առաջարկի և էլեկտրոնային նամակի վերնագիրը պետք է համապատասխանի հետևյալ ձևաչափին` «**Մասնակից ընկերության անվանում/ՍՊԸ-ի անվանում – Մրցույթի համար TD-243324**»:

2.8 Գնային առաջարկները պետք է ուղարկել մինչև **30.08.2024թ. ժամը` 18:00** (տեղական ժամանակով):

**3. Մրցույթի անցկացման կարգը**

- Բոլոր ցանկացողները կարող են դիմել մրցույթին, եթե կարող են պահպանել նշված պահանջները:
- Մասնակիցները պետք է ներկայացնեն գնային առաջարկները հայերեն լեզվով, գները տրամադրվեն Հայկական դրամով (AMD)` համաձայն *Հավելված 1-ում* նշված գնման ենթակա սարքավորումների մասով պահանջված տեխ. բնութագրերի և նկարագրերի:
- Այնուամենայնիվ, եթե ներկայացվեն տարբեր արժույթներով գնային առաջարկներ, ապա դրանք կբերվեն մեկ արժույթային ՀՀ դրամային հիմքի` համաձայն գնային առաջարկների հավաքագրման վերջին օրվա ՀՀ ԿԲ փոխարժեքի:

«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0069,
Դավիթ Անհաղթի 8/4
Հեռ.` +374 (11) 400 400
Ֆաքս` +374 (11) 400 401
Էլ. փոստ` info@ucom.am
www.ucom.am



# Ucom ընկերության համակարգչային գույքի գնման մրցույթ

- Մասնակցի գնային առաջարկում ներկայացված գները Մրցույթում առաջնային լինելու դեպքում կամրագրվեն երկկողմ կնքված ապրանքների մատակարարման պայմանագրով, և վերջինիս գործողության ժամկետում միայն երկկողմ համաձայնության դեպքում կարող են վերանայվել մատակարարման պայմանները:
- Մատակարարը պետք է երաշխավորի, որ մատակարարվող Ապրանքները նոր են և չօգտագործված, այլապես դա պարզվելու դեպքում, ապրանքները ետ են վերադարձվելու Մատակարարին:
- Գնման պատվերի 100% վճարումը կատարվելու է համաձայն մատակարարման պայմանագրում երկկողմ հաստատված վճարման պայմանների, ապրանքի հանձնման-ընդունման ակտի և հարկային հաշվի երկկողմ հաստատմամբ:
- Գնային առաջարկի վավերականության ժամկետ պետք է լինի 45 օրացույցային օր, հաշված` ՄՀ-ում նշված մրցույթի ավարտի ամսաթվից:

## 4. Պատվիրատուի իրավունքները

- Պատվիրատուն իրավունք ունի մերժել Մասնակցի գնային առաջարկը, եթե այն չի ներկայացվել ժամանակին և/կամ ներկայացվել է գնառաջարկի հայտի ոչ ֆորմալ պահանջների խախտմամբ:
- Պատվիրատուն իրավունք ունի Մրցույթը ճանաչել չկայացած և չընդունել գնային առաջարկները` այդ մասին գրավոր տեղեկացնելով Մրցույթի Մասնակիցներին:

## 5. Այլ պայմաններ

- Պատվիրատուն չի փոխհատուցում գնային առաջարկի պատրաստման ծախսերը:
- Սարքավորումների մատակարարումն իրականացվելու է Մատակարարի կողմից և իր հաշվին` գնման պատվերն առաքելով Երևան քաղաքի Րաֆֆու 111 հասցեյում գտնվող Յուքոմ ընկերության կենտրոնական պահեստ:

## 6. Արտադրողի/դիսթրիբյուտորի լիազորագիր

Հարկավոր է, որպեսզի գնային առաջարկում նշված և/կամ վաճառքի ենթակա բրենդային ապրանքատեսակները արտադրող ընկերությունը կամ պաշտոնական դիսթրիբյուտորը իր պաշտոնական ձևաթղթի վրա /*Տեղեկանքի օրինակ*/ մրցույթի Մասնակից ընկերությանը լիազորի և հավաստի, որ սույնով մրցույթի Մասնակիցը Յուքոմ ընկերությանը իրավունք ունենա վաճառել հավելվածում նշված ապրանքատեսականին լրիվ նոր, չօգտագործված վիճակում, և Մասնակիցը պետք է ներառի այդ կնիքված փաստաթուղթը իր Մրցույթի մասնակցության հայտում:

### *Տեղեկանքի օրինակ*

***Սույնով մենք`*** *[Արտադրողի/դիսթրիբյուտորի լիազոր ներկայացուցչի անվանումը]* ***տրամադրում ենք մեր լիարժեք երաշխիքը նշված ընկերությանը`*** *[Լիազորված ընկերության անվանումը]* ***և հավաստում, որ նրա կողմից առաջարկվող ապրանքները*** *[Բրենդի անվանումը/մոդելը]* ***օրիգինալ են և նոր:***

Ստորագրություն` _________ *[Արտադրողի/դիսթրիբյուտորի լիազոր ներկայացուցչի անվանումը]*
Ամսաթիվը`__/__/2024թ.

«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0069,
Դավիթ Անհաղթի 8/4
Հեռ.` +374 (11) 400 400
Ֆաքս` +374 (11) 400 401
Էլ. փոստ` info@ucom.am
www.ucom.am

ՏԱՆ ԱՄԵՆԱԱՐԱԳ ԻՆՏԵՐՆԵՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

# Ucom ընկերության համակարգչային գույքի գնման մրցույթ

## Հավելված 1

| Ապրանքի անվանում | Գնման քանակ | Պահանջվող ապրանքի տեխ. պարամետրեր | Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական նկարագիր/մոդել/փարթ համար | Միավոր գին (ներառյալ ԱԱՀ) | Ընդամենը գին (ներառյալ ԱԱՀ) |
|---|---|---|---|---|---|
| Ստացիոնար համակարգիչ (PC workstation) | 150 հատ | CPU i3 (11th or 12th generation), SSD-250GB, RAM-8GB | - | - | - |
| Մոնիտոր (Համակարգչի Էկրան) | 120 հատ` սև գույն | Էկրանի չափսը` 24 դույմ, FHD, Հաճախականությունը` 60~70hz | - | - | - |
| | 30 հատ` սպիտակ գույն | Էկրանի չափսը` 24 դույմ, FHD, Հաճախականությունը` 60~70hz | - | - | - |
| Նոութբուք համակարգիչ (Notebook) | 100 հատ | CPU i3 (11th or 12th generation), SSD-250GB, RAM-8GB, TPM, Display FHD – 14” -15,6”, Availability of RJ45 and USB ports. | - | - | - |
| | 10 հատ | CPU i5 (11th or 12th generation), SSD-250GB, RAM-16GB, TPM, Display FHD – 14” - 15,6”, Availability of RJ45 and USB ports. | - | - | - |